

ԲԱԺԱՆՈՂՅԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պուլկարիոյ համար  
 Տարեկան 12 ծր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արտասահմանի հա-  
 մար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Անկերիկայի համար  
 Տարեկան 3 սրշ.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆԻՔԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանուգրան սուրբ սուրբին  
 երեսին համար 40 սանթիմ  
 է. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սանթիմ է. երեքին  
 անի սեղաններու համար  
 20 Օլոյ գեղջ կրչայն:

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

# ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և դրամ դրկեյ  
 ներկայումս անգրիկ

Редакция на вестник  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

Կոմիտեի և յին տրուի

Արտասահմանի ձեռքի  
 )( 20 ՍԱՆԹԻՄ )(

Պուլկարիոյ համար ձեռքի  
 )( 15 ՍԱՆԹԻՄ )(

## Ս. ԳԱՐԻԵԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ-  
 ԽԱՒՈՐԵԱԼ ՍՕՑԻԱԼ ԲԱՆԱԳՐԻ ՎԻՃԱ-  
 ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փափագողները կրնան  
 իրեն զիմել՝

Զար-Պորիս փողոց Վառնա  
 6—25

## ԱՌԻԹԵՆ ՕԳՏՈՒՆՔ

Ժամանակէ մը ի վեր կովկաս-  
 եան թերթերու մէջ կը կար-  
 դանք արձանագրութիւնը հսկայ  
 կտակներու, որոնք յասկացուած  
 են Ռուսիոյն դուրս գանուող  
 հայ վարժարաններու: Երէկ տի-  
 կին Նատիրեան մըն էր, որ  
 240,000 ռուպլի կտակ մը կը  
 յատկացնէր Արարատականի հայ  
 վարժարաններուն, այսօր ուրիշ  
 տիկին մը, Թագուհի Փանոսեան,  
 զանազան ազգային հաստատու-  
 թեանց հազարաւոր ռուպլիներ  
 կտակելէ ետքը—որոնց մանրա-  
 մասնութիւնը ընթերցողը պիտի  
 գտնէ Ազգային Բրոնիկի բաժնին  
 մէջ—իր հարստութեան մնա-  
 ցորդն ալ կը կտակէ Ռուսաստանի  
 և «արտասահմանի» մէջ գտնուած  
 հայ գարոցներուն:

Արտասահմանի վարժարաննե-  
 րուն նիւթապէս աջակցելու այս  
 ձգտումը Ռուսահայոց մէջ զօրա-  
 ցաւ կովկասի հայ վարժարաննե-  
 րուն փակումէն ի վեր: Մեր Ռու-  
 սահայ ազգակիցները, որոնք կը  
 զգային իրենց սպառնացող վտան-  
 քը, որոշեցին իրենց բոլոր ուժը  
 տալ զէթ արտասահմանի մէջ  
 գտնուած հայութիւնը կենդանի  
 պահելու, մանաւանդ անոնց  
 գարոցներուն նիւթապէս օգնու-  
 թեան հասնելով:

Իսկ այդ գարոցները, ինչպէս  
 յայտնի է, նիւթապէս իրացնէ  
 աննախանձելի վիճակի մէջ կը  
 գտնուին: Մանաւորապէս Պուլ-  
 կարահայ վարժարանները ամէն  
 տարի անագին փրաններ կը կրեն,  
 պարզապէս պիտոճէի անձկու-

թեան պատճառաւ: Ամէն տարե-  
 շրջանի սկիզբները մեր հոգա-  
 բարձունքը կը սկսին զլուխ ճա-  
 թեցնել, հասոյթի ազբուրներու  
 մասին խորհիլ, և գրեթէ առանց  
 բացառութեան վերջ ի վերջոյ  
 իբրևէ միջոց կորոշեն ուսուցիչ-  
 ներու ամսականները յապաւել  
 առանց խղճմտանքի: Այս յետոյ  
 կը սկսին անվերջ խնդիրներ  
 դարձնել երկու կառավարիչ  
 մարմիններուն, նիւթական պա-  
 տասխանատուներու և բարոյական  
 պատասխանատուներու մէջ, ու-  
 թոնք շատ անգամ ցաւալի ար-  
 դիւնքներ կուենան և դառն  
 յուզումներու տեղի կուտան: Այս  
 պատճառաւ, երբեք ուսուցչա՛ն  
 խումբ մը չի կրնար ծրագրական  
 շրջան մը բոլորել կանոնաորա-  
 պէս, որովհետեւ ամէն քայլին  
 նիւթական դժուարութեանց կը  
 բաղխի, ու այդպէս պիտի ըլլայ  
 որքան ատեն Պուլկարահայ վար-  
 ժարանները հաստատուն եկա-  
 մուտ ու պիտոճէ չունենան:

Արդ՝ քանի որ այս ցաւը ամէն  
 տեղ է, ինչո՞ւ ամէն քաղաքի  
 հոգաբարձուները չեն միանար  
 հաւաքական փորձեր ընելու, ազ-  
 բիւրներ ստեղծելու մասին խոր-  
 հելու համար: Այն հոգաբարձու-  
 թիւնը որ պիտի յաջողի մեր  
 վարժարաններու նիւթական «հաս-  
 տատ» ու «անփոփոխելի» պիտոճէ  
 մը ապահովել, անփոխաբխելի  
 ծառայութիւնը մատուցած պիտի  
 ըլլայ Պուլկարահայերուն:

Ու այսօր առիթը ինքնին կը  
 ներկայանայ: Կովկասահայ մա-  
 մուլը ամէն օր կարճաճանգրէ աբ-  
 տասահմանի վարժարաններուն  
 մեծկակ դումարներ կուսկողնե-  
 րու անունները: Այսօր «Մշակ»-  
 անի մէջ կը կարգաւ թէ՛ կովկասիոյ  
 այն հայերը որոնք 15 տարի  
 առաջ ընդունուելով կը հալա-  
 ծեն եղեր վարժարան բանալու  
 խօսքն անգամ ընող պաշտօնեա-  
 ները, ուսանողները, հիմա, հայ  
 գարոցներու փակումէն ի վեր,  
 տարօրինակ ոգեւորութեամբ մը  
 սկսած են փարիլ իրենց զուսկ-  
 ները կրթելու գործին: Կարո-  
 չութեան տէր չեղող անհատներն  
 իսկ ամենաբուռն զրկանքներով

յանձն կառնեն իրենց տղաքը  
 հոգեւոր հայ վարժարան գտնուող  
 քաղաքներ զրկելու: Երբեք ու-  
 նեւորները ոգեւորութեան, և լիկ  
 մրցում մը կայ կարծես գէթ ար-  
 տասահմանի վարժարաններուն  
 օգտակար ըլլալու:

Որքան ատեն, այդ ոգեւորու-  
 թիւնը գեռ չէ մարած, մենք ալ  
 աշխատինք օգտուիլ անկէ: Թող  
 Պուլկարիոյ բոլոր հոգաբարձու-  
 ները պատգամաւորութիւն մը  
 կազմեն կովկասիոյ կեդրոնները,  
 Մոսկուա և այլուր շրջելու, և  
 ազգային վարժարաններուն հա-  
 մար նուիրատուութիւններ հա-  
 ւաքելու: Մենք ապահով ենք որ,  
 Ռուսահայ հարուստները անտար-  
 բեր չի պիտի գտնուին անոր հան-  
 դէպ, մանաւանդ երբ կաթողի-  
 կոս, Խրիմեան Հայրիկն ալ իր  
 կողմէ յանձնարարած ըլլայ այդ  
 պատգամաւորութիւնը: Երբեք  
 թիւն մը պիտի ըլլայ իրենց հա-  
 մար հեռու աշխարհներէ եկած  
 այս դիմումը, հաճելի, նուիրա-  
 կան նորութիւն մը, ուրիշ պիտի  
 զգածուի ամէն հայու սիրտ:

Օգնութեան ձեռքը ինքնին կը  
 կարկառուի արդէն: Գիտնանք  
 առիթէն օգտուիլ, և Ռուսահայ  
 բարերարներու ուշադրութիւնը  
 մեր վարժարաններու վրայ եւս  
 դարձնել տալ:

ՇԱՀԱՊ

## ԳԻՍԱԿԸ

Բարեկենդան է այս շաբաթ,  
 անխնայ կեր ու խումբի, խնդու-  
 թեան ու զուարճանքի, դարձ  
 դարձիկ պարերու, բազմերփ-  
 եան տարազներու այլանդակ  
 հուպանքի ցուցադրութեան  
 ժամանակ է այս շաբաթ:

Բագոսի և Սատուրնոսի նուիր-  
 տած տօներու պարզ շարունա-  
 կութիւնն է ասիկա. զօր կը կա-  
 տարեն խելայնգօրէն Արեւելքի  
 և մանաւորապէս Արեւմուտքի  
 ժողովուրդները:

Բագոս գինիին աստուածն էր,  
 իսկ Սատուրնոս՝ Արամազդի հայ-  
 րը:

Բագոսի քրմուհիները տարին  
 անգամ մը իրենց աստուծոյն  
 սահմանած էին տօն մը՝ զօր կը  
 կատարէին մեծահանգէս և խն-  
 լայն խանդավառութեամբ: Գը-  
 լուխին կանանչ բազմոցներով  
 զարդարուն՝ ձեռքերին thyrse  
 բռնած, հերարձակ կը վազու-  
 տէին հոս ու հոն, հրապարակնե-  
 րու և փողոցներու մէջ կը պա-  
 րէին, կատստէին, և սուր ճիչե-  
 րով ու աղմուկներով օդը կը  
 թնդացնէին: Այս տօները տեղի  
 կուենային Եգիպտոս, Յունաս-  
 տան, նա մանաւանդ Իտալիա:

Սատուրնոսի տօները կը կա-  
 տարուէին Հռովմի մէջ դեկտ-  
 16էն մինչեւ 18: Սատուրնոս,  
 իր Արամազդ որդիին ձեռքով  
 երկինքէն արտաքսուած, կու-  
 գայ կը հաստատուի Լատիոմ,  
 ուր առաջին անգամ մարդկային  
 հաւասարութեան հիմը կը դնէ:  
 Հաւասարութիւնը հոչակուած  
 օրը, ժողովուրդը ամէն տարի  
 մեծամեծ տօներ կը սարքէր.  
 գերիներն իսկ՝ գոյնզգոյն պա-  
 րեգօտներ հազած՝ իրենց մե-  
 ծերուն պատկերները ու ձեւերը  
 կը ցուցադրէին, նոյն օրը ա-  
 մէն անհատ կատարեալ ազատու-  
 թիւն կը վայելէր խօսելու, շար-  
 ժելու և գործելու:

Բագոսի և Սատուրնոսի տօները  
 փոխանցուեցան արեւելքի և մաս-  
 նաւորապէս արեւմուտքի ժողո-  
 վուրդներուն:

Սակայն մարդկութիւնը, որ  
 միշտ սիրահար է նորութեան,  
 այդ գունազոյգ տարազներուն  
 վրայ աւելցուց վերջերս դիմակ  
 մըն ալ: Ու դիմակը, որ միայն  
 բարեկենդանի շաբթուան համար  
 կը գործածուէր, մտաւ մարդ-  
 կային ամէն գործերուն մէջ ան-  
 խախտ: Գիմակ խօսքի մէջ, դի-  
 մակ գործի մէջ:

Բասներորդ դարը մտանք դի-  
 մակով: Հայը շարժուեցաւ, կու-  
 չուպտուեցաւ, իր վարդազոյն  
 արխնով ներկեց ու կը ներկէ  
 տակաւին իր հայրենի հողն ու  
 Պոլսոյ սալայատակները: Եւրո-  
 պան մարդասիրութեան դիմակին  
 տակ թող տուաւ կարմիր Մար-  
 դուն որ իր գազանային մար-

գախտոյ, բոսնիայի գործը շա-  
րունա է անխափան: Թրանսիլ-  
իւրի քննութիւնն աւանդաբար  
թիւնը պահելու միակ նպատակով  
կուեցաւ ու կը կատարուի  
իրմէ շատ ու շատ բարձր ուժի  
գէտ, և այսօր այդ անհաւասար  
կասէն յոյնք ապրաստած  
օգնութիւն կը խնդրէ և բոսնիայի  
մարդասէր ազգերէն: Բայց ա-  
նոնք խորին ցաւակցութեան գի-  
մակին տակ սահմակած թող կու-  
տան որ Ալպրոն իր հակամարդ-  
կային գործն ի գլուխ հանէ ա-  
նաբեզի:

Եւրոպան, լուսոյ և յառաջգի-  
մութեան առաջնորդն, քաղաքա-  
կրթութեան գիմակին տակ յօշ-  
յօշ կը պատուէ՝ սրտի ամենայն  
հանդարտութեամբ՝ երկնից կայս-  
րութիւնը:

Այսօր քսաներորդ յարուն  
սկիզբը բոլոր մարդկութիւնը,  
կարծես, հրաւիրուած է տիե-  
զերական պարահանգէսի մը,  
ուր հրաւիրեալները գրեթէ առ-  
հասարակ գիմակաւորուած են:  
Մայրիկի է որ շատ շատ վեր-  
ջանար այդ պարահանգէսը և  
մարդկութիւնը ճակատարաց ու  
անդիմակ ողջունէր քսանըմէկ-  
երորդ դարը:

ՀՈՒՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՒՐԻՉ, 14 Յունուար

«Անձրեւ է գալիս», ասում է  
առածը, գաւթարի կանանց  
Բարեգործական ընկերութիւնն  
է:

Քանի՞ քանի՞ անգամ գրել է  
մամուլի մէջ որոշ նկատուող-  
թիւններ, քննել նրա ամ-  
բողջ գործունէութիւնը, և երեւան  
հանել յայտնի ղեկավարները ու  
կեղծիքները:

Չեմ ուզում անցեալներից յի-

շել, որ կրկնութեւն չլինի, մի-  
միայն իր վերջին արած առաջ-  
գիմութեանը... շնորհաւորում  
ենք փոխանակ, գոնէ կուսակ-  
ցական խանդով կուելու, բնդ-  
հակառակը բոլորովին մեռած են,  
ինչպէս ցոյց է տալիս իրանց  
գործունէութիւնը:

Այն մարդիկ, որոնք ղեկավա-  
րում են ընկերութիւնը, այսօր,  
միեւնոյն ժամանակ ներկայանում  
են և իբրև յեղափոխականներ:  
Փակագծի մէջ յիշենք, որ եթէ  
մի գրական առաջարկութիւն  
արի նայնիսկ իրանց կուսակից-  
ների կողմից, թագնելու հա-  
մար միան ծակը հաղարներով  
կառնեն, որով և յարգելի տիկին-  
ներին տանում են գէպի խորխո-  
րատ, անդունդ:

Ընկերութիւնը 1898—99 ու-  
սումնական տարում, իր մանկա-  
պարտէզը յանձնել էր կուսակա-  
րելու Օր. Փուլինեանին, և  
«Շարժում»-ում գրեց թէ ինչ-  
պիսի ամարգի կերպով ընկերու-  
թիւնը վարեց յարգելի օրիորդի  
հետ, և հէնց այդ օրից սկսեց  
ընկերութեան անկումն և ցոյց  
տեց իր ինչ լինելը, Յանկարծ,  
Փուլինեանից յետոյ վարձում է  
վարձուհի մանկապարտէզի հա-  
մար մէկին, որ մի բան չէր ներ-  
կայանում և բոլորովին հակա-  
պատկերն էր իր մտաւոր պաշա-  
րով:

«Չը գտանք ուրիշին, աւելի  
լուին», ահա նրանց թոյլ է ո-  
ղորմելի պատճառաբանութիւնը,  
պատճառաբանութիւն որ յատուկ  
է ինքնասիրութիւնից զուրկ  
մարդուն, բաւեր որ ցոյց են  
տալիս իրանց անկարողութիւնը:

Մամուլը իր գերը, ի հարկէ,  
կատարել էր, ոչ ոք, կարգալով  
այդ, չէր համաձայնում յանձն  
տանել մանկապարտէզում վար-  
ժուհու պաշտօն վարելը, և դա  
մի ապտակ էր յարգելի տիկին-  
ներին, որ մինչև մահ չի պիտի  
մոռանան ի հարկէ, եթէ ունին

ինքնասիրութեան գէթ մի փոքր  
կայծ:

Մի ապտակ եւս հասարակու-  
թեան կողմից. նոյն 1899—1900  
ուսումնական տարում մանկապար-  
տէզ ուղարկեցին շատ քիչ թով  
աշակերտ աշակերտուհիներ ի  
հարկէ, համեմատելով նախկին  
տարիների հետ: Յանկարծ 45ից  
իջնում է 20ի, և որոնք ուղար-  
կում էին ընտանեկան զանազան  
պայմաններից ստիպուած:

Էլի խորխորատ, 1900—1901  
ուսումնական տարւոյ համար,  
վարձում են վարձուհի, որի ա-  
նունը աւելորդ է նոյնիսկ յիշել,  
մէկին, որ իր ամուսնու հետ ան-  
ցած տարիներում ամեն տեսակ  
սուր միջոցների գիմեցին, որ-  
պէս զի Լիլուայի հոգաբարձու-  
թիւնից կորչեն իրանց 2 տար-  
ւոյ բռնիկը. ինչ կեղծ պայմա-  
նաթղթեր, ինչ պատարան,  
վերջապէս ամեն ճիգ գործ գրին  
զարոցին նոյնիսկ վնասել: Այդ  
ամուսինների հոգաբարձու-  
թիւնը վնասել էր իրանց անբա-  
րոյականութեան համար:

Չը նայած ամեն ջանք գործ  
էին գրել, ուրիշին վարձելու  
կովկասում, մինչև անգամ մի  
քանի տեղ յարգելի նախագա-  
հուհին թոյլ էր տել անելու:  
«Մեր հակառակորդներին ցոյց  
տալու համար պատրաստ ենք  
մեծ գումար ծախսելու, և նա կար-  
ծում է այդ վարձուքով գէպի  
հասարակութեան դրամները,  
վրէժ լուծած կը լինի: Երանի՜ թէ  
ունենային այնքան քա՛նութիւն,  
ցոյց տալին որ իսկապէս զուրկ  
չեն... բայց բոլորը ի դերեւ  
ելաւ:

Դարձեալ խորխորատ, Այժմ  
մեր ձեռքին է ընկերութեան  
99—900 տարեշրջանի տեղեկա-  
գիրը, որ ձկուտ է մի շատ ո-  
ղորմելի յառաջարանով, որ  
մարդ կարգալիս՝ արդէն հաս-  
կանալի է լինում ընկերութեան  
ներկայ ողորմելի գրութիւնը:

Ի միջի այլոց ընկերութիւնը գը-  
րում է նոյն յառաջարանում «չը  
տեսնուեցաւ մի անկախակալ,  
անկեղծ ու բարեկիրթ քննադատ  
որ անձնապէս կամ գրուոր ներ-  
կայացնէր իր նկատուողութիւն-  
ները գործառնութիւնների հա-  
մար և կամ «բաց» ստորագրու-  
թեամբ մամուլի միջոցաւ պար-  
զէր, բացատրէր իր կարծիք-  
ները, գիտողութիւնները ու  
խորհուրդները»:

Շատ սքանչելի նախագատու-  
թիւններ, բայց թէ որքան ձըշ-  
մարտութիւն հն պարունակում  
իրանց մէջ, ահա հարցը:

ՆՈՐԱԹ  
(Շարունակելի)

ՀՈԳԱՐԱՐՁՈՒՆԵՐՈՒ  
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌՈՒԻ

Վարդ կիրակի, փետրվար 11ին,  
թաղապետութեան ընտրութեան  
հետ, պիտի կատարուի նաև հո-  
գաբարձութեան ընտրութիւնը:  
Ա՛խ ատ հոգաբարձուները,  
ինչե՞ր քաշած են ու կը քաշեն  
վարժարանները շան չի հասկցող  
մարդու մտիկ շընոյ. ինքզինք-  
նուն հաւնած, քառակուսի մար-  
դակերպ հոգաբարձուներու ձեռ-  
քէն:

Օր նոր, ուսուցիչ նոր, ծրա-  
գիր նոր, մեթոտ նոր, ճարի  
չանցնիր որ մեր վարժարաննե-  
րու մէջ հոգաբարձուական հըս-  
կայ աւելը չի քէ, չի տանի  
նախորդ տարուան բոլոր մնա-  
ցորդները, ինչ կուզէ թող ըլ-  
լայ, բարակին յայոյ շիկայ:  
Եթէ մեր հոգաբարձուները նոյն  
փութկոտութիւնը ունեցած ըլ-  
լին նաև իրենց խանութի տես-  
րակներուն մէջ, տարեգլխուն,  
«պիլանչօրին» մնացորդն ալ աւել-  
լու նոյն «անշահախնդրութեամբ»,  
չիտակը ոչ մէկ դժգոհութիւն կը  
յայանէի հոս: Բայց չէ, «քէսէին  
խօսքը մի ընէք»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՀԱՐԿԱՌՈՐ Է  
ԱՐԳԵՅԹ ԹԻԱՆՃԱՆ ՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

III

Այդ ուղղութիւնը իր ուժը, իր  
բարերար ազդեցութիւնը համեմատա-  
բար աւելի զօրեղ կերպով ցոյց տուց  
1899—1900 ուսումնական տարում.  
աշակերտ աշակերտուհիները ընթեր-  
ցանութեան անյադ փափագ ու սէր  
էին ստակ, հարցասիրութիւնը  
աչքի ընկնող և չափազանց միտա-  
բական էր բոլոր դասատուներին հա-  
մար. ամեն տեղ, ամեն բանում մեր  
խօսակցութեան առարկան փոքրիկ-  
ների զգալի յոռաջգիմութիւնն էր:

Հարցասիրութեան շատ օրինակնե-  
րից մէկն յիշեմ. որ իմ կարծիքով  
ցոյց է տալիս մատուցութեան ուժ. —  
տղայոց երրորդ դասարանում (ղեկել որդ  
սարի) բնախօսութեան դասին երբ  
պարզեց, թէ արեւը արտաքին օ-  
գին հանդիպելի լեռգանում է, իս-  
կայն մէկը թոյլուութիւն խնդրեց և  
հարցրեց. «մեր երակներին ու թո-  
քերի մէջն էլ օդ կայ, ինչո՞ւ արեւը  
նրանց մէջ չէ լեռգանում». թէև ի-  
րանք աշակերտները ցոյց տին երկու  
օրի տարբերութիւնը և ուրիշ զա-  
նազան պարագաներ, շնայած դրան,  
ինձ զարմացրեց այդ խելացի հարցը.  
այդ գիտող հայեացքը. ուրիշ զպրո-  
ցում էլ աւանդել էի նոյն առարկան  
բայց երբէք այդ տեսակ տիպիկ ու  
խելացի հարցի չէի պատահած: Դեռ  
չեմ ասում աշակերտական այն ընկե-  
րութիւնների մասին, որոնք զպրո-  
ցից գուրս էլ պարբերաբար հաւա-  
քում են երբեմն սրա, երբեմն նրա

տանը և իրանց մատչելի գրքեր են  
կարդում, այս ու այն նիւթի մասին  
խօսում. այս տեսակ գէպերում դաս-  
տիարակը կամ ուսուցչի ներքից մէկը  
ներկայ է լինում. դրանցից էլ պար-  
զել է, որ գիտեն կանոնաւոր կեր-  
պով վիճել, դատել. տղայոց Բ. և Գ.  
դասարանցիները հակալիզական և  
չխողների ընկերութիւն են կազ-  
մել. զեռ չեմ ասում, որ 1893—99  
ուսումնական տարում սկսած դաս-  
ցական հանդիպը (Արագիր) 1899—1900  
ուսումնական տարում սկսելի լուրջ  
ու կանոնաւոր էր տարում շնորհիւ  
իրանց ձեռք բերած մտապաշարի, իմ  
և առ հասարակ ամբողջ ուսուցչական  
խմբի խորին համոզմունքով Լիլուա  
քաղի երկսեռ դպրոցների սխիթարա-  
կան յարաբերութիւնը հետևեալի և  
այն աւարկայական մեթոդի, հետևե-  
լով և անօգուտ ֆենոլոլոգիայի և  
քաղաքական ոչնչանալուն:

1898—99 ուսումնական տարւոյ

տեղեկագրից մէջ բերեմ, որ փոխադ-  
րողների ընդհանուր տոկոսն էր  
45 0/0, մինչդեռ 1899—1900 ուսում-  
նական տարւում 64 0/0. ուրեմն  
1899—1900 ուսումնական տարում  
100ից 10 հոգի աւել են փոխադրուել,  
քան 1898—99 ուսումնական տարում.  
այս աւելանալն էլ, իմ կարծիքով,  
ամենահաւանօրէն առարկայական մե-  
թոդի շնորհն է և թանջանների ու  
քննութիւնների սպանալիքներից ու  
ճնշումներից ազատ մնալը. թէ ինչո՞ւ  
1898—99 ուսումնական տարում հա-  
մեմատաբար աւելի քերն են փոխ-  
ուել, դա կարելի է բացատրել նրա-  
նով, որ այդ տարում դեռ բոլորովին  
անցած չեն եղել յայտնի վարդու-  
թեան ու դասատուների թողած ազ-  
դեցութիւնը, որը հաւանօրէն աստի-  
ճանաբար էլ պիտի ոչնչանայ:  
Ներկայ 1900—1901 ուսումնական  
տարում էլ «Հայկազեան» ու «Թա-  
մարեան» երկուսն զպրոցները նոյն

Գառնանք մեր նիւթին, վառ- նացի բարեկամներ, առանկով գործ առաջ չերթար, ու է բան մը ընելէ առաջ, քիչ մը խոր- հինք, նպատակնիս հասկնանք ազէկ մը և յետոյ անոր համե- մատ գործենք:

Ինչ է մեր նպատակը հոգա- բարձու ընտրելով:

Ամէնքնիդ ալ անկասկած կըն- դունիք թէ՛ մեր նպատակը վար- ժարանին կանոնադրութիւնը, յառաջիկայումս ինչ և արգիւնա- ւոր վիճակի մէջ գրուիլն է, Եւ ատոր համար աշխատող, շոհո- յութեան տրամադիր, գործէ հասկցող խելացի մարդիկ պէտք են, մէկ խօսքով իրենք զպրոցի երես տեսած մարդիկ, գոնէ մե- ծամանութեամբ, որոնք իրենց մէջ միացուցած ըլլան նաև բարեխղճութիւնն ու ազնուու- թիւնը:

Փառք Աստուծոյ հիմայ մենք ունինք այդ սոսակ մարդիկ, «մոմո վառելու պէտք չիկայ» դա- նոնք գտնելու համար, բարեա- յակամութիւնը միայն կը բաւէ: Կուզէ՞ք որ ես ցանկ մը ներկա- յացնեմ, առանց երկար խորհե- լու, առաջին գրչիս եկած անունը գրելով: Ահա առաջիկայ:

- Յակոբ Մալեան
- Փիլիպպոս Հալաճեան
- Յովակիմ Թովմասեան
- Յարութիւն Հաճօրեան
- Միհրան Զգօնեան

Գիտնանք մեր սուած քուէին արժէքը, մեքենաբար թուղթ մը չի ձգենք տուփին մէջ: Դա- րունակ զժողովուրդ չենք կրնար օգտակար ըլլալ մեր պղտիկ եղ- բայրներուն: Մենք մեր պարտա- կանութիւնը կատարել գիտնանք ու ապագայ պատասխանատուու- թեան սլաքները թող չի ծակ- ծկեն մեր խղճերը:

ՄՈՒՐԱՏ-ՍՈՒՐԱՏ

—)(—

ուղղութեամբ առաջ են գնում. նրանք առանց կանգ առնելու պէտք եղած փոփոխութիւններ ու նորութիւններ մտնում են, բայց միշտ հաւատարիմ մնալով իրանց սկզբունքին, հրանց ուղղութեան զխառն կէտերին:

Գուցէ ոմանք ասեն, թէ «Թա- մարեան» օրիորդաց դպրոցը հինգ տարւայ դասընթաց ունի, իսկ «Հայ- կաղեան» աղայոց դպրոցն էլ եօթը տարւայ դասընթաց՝ ընդամենը մօտ 260 երկսեռ սաներով, զրանք փոքր բաներ են. բայց որպէս թէ անկա- բելի է նոյն սխալմը գործարկել թե- մական դպրոցներում, որոնք սովորաբար 9 տարւայ դասընթաց ունին: Այս տեսակ մտածողները չափից դուրս սխալում են. ահա թէ ինչո՞ւ. — Ինքս 1896—97 ուսուցական տարում ուսուցիչ եմ եղել Երեւանի թեմա- կան դպրոցում. իմ փորձերից դուրս եկաւ, որ իմ անցած առարկայական մեթոտով տարւայ վերջը այնպէս լաւ

ՌՈՒՍԱՑ ԻՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

—

Կայսեր անունով նշանակւած քրի- նութիւնը սկզբում շատ յոյսեր է խոստանում, բայց վերջը ապարդիւն մնում, բարձրագոյն ներուժը դառ- նում է մի տեսակ ֆիկցիա, որովհե- տեւ շատ ուսանողներ բանտի խոր- քերից չեն ազատուի, շատերն աք- սորում են, շատ շատերի առաջ էլ զպրոցի դռները փակ են մնում: Ի հարկէ սիրող կարգերն էլ չեն փոխվում:

Սեպտեմբերին նորից սկսւում են փոքրիկ խլրտուներ և Պետերբուրգի ու Մոսկովայի համալսարանների լա-ւագոյն պրոֆեսորներից շատերը թողնում են իրանց ամբիոնները: Սակայն այս անգամ բանը բացար- ձակապէս ցոյցի չի հասնում:

Միևնորոգը հետզհետէ խաղաղվում էր, բայց այդ խաղաղութիւնը միայն արտաքին էր, որովհետեւ ուսանող- ների բողոքող ոգին լուր էր միայն ժամանակաւորապէս, բայց ոչ ընդ միշտ: Նա միայն բարեբաւակ ա- ութի էր սպասում որպէս զի նորից բռնկէ բուռն առեւտրութեան կրակը: Հէնց ներկայ ուսանողական տա- րեքը ներս սկիզբներում փոքրիկ շար- ժումներ տեղի ունեցան թէ Պետեր- պուրգում են թէ Կիւեում:

Պետերբուրգի շարժման պատճառը տիրահոյակ Սուվորինն էր, որ իր ժանգոտ գրիչը մի օր հայերի դէմ է ուղղում. մի օր լեհացիները, մի ուրիշ օր էլ ֆրիւնների կամ հրէաների: Այս անգամ փորձում է նա իր հոսած գաղափարները կոնսուրվացիայով անցկացնել հասարակութեան մէջ, ահա թէ ինչպէս:

— Դա Պետերբուրգի «Մալոյի Թէ- ազր» զրիբկատորն է, ուստի եւ զա- նազան միջոցներով յաջողեցնում է բեմ դուրս բերել (նոյեմբերի 23ին) մի անամօթ պատկեր «Գոնդրապա- տիկոս», որի մէջ զգուշի գոյներով պատկերացրած է հրէական ժողո- վուրդը: Հանդիսատես հասարակու- թիւնը որոնց թում բազմաթիւ ու- սանողներ, հէնց առաջին գործողու- թեան ժամանակ աղմուկով բողոքում են Սուվորինի անամօթ վարժուքի դէմ եւ խանգարում ներկայացումը: Դրանից յետոյ ուսանողներն ի-

գիտեն, լաւ են յիշում հոգեբանու- թիւն, մանկավարժութիւն, ֆի- զիկա, որ երբեք կարիք չկայ քննու- թիւն տալու, բայց եւ այնպէս քրի- նութիւն եղաւ ընդունուած սովոր- լութեան համաձայն (պէտք է ասեմ, որ 1896—97 ուսուցական տարում Երեւանի թեմական դպրոցում քննու- թիւն եղաւ միմիայն վերջին դասա- բանում): միևնոյնը կարելի է ասել ուրիշ առարկաների վերաբերմամբ, եթէ այդ մեթոտով են անցած: Ես միանգամայն համոզւած եմ, մաղա- չափ էլ չեմ կասկածում, որ ինչպէս մինչեւ Գ. ու Դ. դասարան (6 ու 7 տարւայ դասընթացը) նոյն մեթոտով կարելի է անցնել մի կողմ թողնե- լով թեմականի ու քննութիւնների ապարդիւն-իլան կարողութիւնը, այնպէս էլ նոյն կերպով կարելի է վարել թեմական դպրոցների եւ այլ միջնակարգ ուսուցարանների հետ:

րանց ժողովներում վճռել են հաւա- քական գրաւոր գիմում անել 1 «հե- զինակների ընկերութեան» եւ խնդ- րել անարժան հրապարակախօս Սու- վորինին անդամակցութիւնից զր- կել, 2. Ֆրանսիական Պրեզիդենտին եւ խնդրել անամօթ հրապարակա- խօսին զրկել «Պատուաւոր Լեզիոնի Ասպետի» անդամից 3. ուսուց թատ- րոնական ընկերութեանը եւ խնդ- րել դատի ենթարկել այն դերասան- ներին, որոնք յամարձակել են այդպէս յանդուգն վարել հասարա- կութեան դէմ:

Սակայն այդպիսի բարոյական մի- ջոցները կունենան արդեօք մի որոշ հետեւեալք. ամօթանքի ու զգուշութի գէթ մի նշոյլ կը զգան արդեօք Սու- վորին եւ tutti quanti. դժուար է հա-ւատալ:

Կերեւի շարժման պատճառը հե- տեւետիւն էր:

Աշունը Ղրիմում կայսեր կեանքի դէմ փորձ է կատարում, բայց ան- յաջող անցնում... Սուզարկութիւն- ների ու ձերբակալումների ծայրը հասնում է Լեհաստան: Վարչաւա- յում երեք մարդու կախաղան են բարձրացնում: Կիւեում ձերբակալում են բազմաթիւ ուսանողներ, Տեղի են ունենում ժողովներ, խորհրդակ- ցութիւններ, ուսանողութիւնը հա-ւաքում է համալսարանի եւ հրաւի- րում է բեկատորին մի հարցի մասին բանակցելու: Սակայն բեկատորի փո- խարէնն պալիս է ժամտարմաների գնդապետի իր գիտությունով եւ շա- փազանց կոպիտ ձեւերով սպառնա- լիքներ կարգում... Մի քանի օր դառախօսութիւններն ընդհատում են, Բայց վերջը նորից սկսվում, Սակայն այդ շարժումն էլ էժան չի նստեց ուսանողներին: Լուսաւորու- թեան նախարար հիմնելով 1899 թիւի յուլիսի 29ին հրատարակւած օրէնքի (1) վրայ, մօտ օրերս հրատա- րակվել է հետեւեալ դատաւճիռը:

Կլիսաւոր խոտվարներին 2ին երեք տարով, 3ին երկու տարով եւ 176ին մէկ տարով զինուորական ծա- ույութեան մտնել: Մնացածնե- րից 176 հրապարակական նախատիք կարգայ եւ ուսանողական արտօնու- թիւններից զրկել:

Ահա այդպէս է պատժում հզօր մարդն

(1) Հրատարակուած է ուսանողա- կան խառնակութիւնների առիթով:

Մեր դպրոցներում ընդունւած սիս- տէմը այս երկու տարւայ փորձով ա- պացուցանում է, որ թեմականները ու քննութիւնները փոխարինող մի- ջոցներ կան. երբէք պէտք չկայ ստիպւած գործարկել այդ միջոց- ները, ինչպէս Պ. Բալազեանը եւ ու- ըրիչներն են կարծում: Միւս կողմից այն էլ պարզ պիտի լինի, որ Արեւ- մանան Եւրոպայում վաղուց այդ ուղ- յութեամբ առաջ գնացող դպրոցներ կան, որոնք ընդունում են ներկայ մանկավարժութեան պահանջները, լսում են ընդհանուր առողջապահու- թեան օրէնքներին, մասնաւորապէս դպրոցական առողջապահութեանը:

1900 թիւի սկզբին էր, որ Ռու- սաստանում լուսաւորութեան մի- նիստրի առաջարկութեամբ մի յանձ- նատուրով կազմակերպուեց քննութիւն- ների մասին իր կարծիքն յայտնե- լու. յանձնատուրովի մշակած ծրագրով քննութիւններն ու վերաքննութիւն

իր հանգիստը խանգարողներին: Այս պատժում է եւ կը պատժի, բայց երբէք չի կարողանայ այդպիսի խիստ միջոցներով ուսանողական շարժումներն արմատախիլ անել, բռնութեան լծի տակ հեծողների բողոքն ընդհատել...

ՌՄՐԱԿՈՄ

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՍԸ

Հինգշաբթի օր եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ վարդանանց հանդէսը: Եկեղեցիին աւարտումն ետքը, վար- ժարանին երկսեռ ուսանողութիւնը զոյգ զոյգ շարուած՝ եկեղեցի իջաւ «Կուուեցէք տղերք»ը երգելով: Առկե-ւէն աշակերտուհիները կը քայլէին, որոնց կը հետեւէին աշակերտները եւ երկուքին մէջ, տղայ մը կը կրէր հայ- կական գրօջակը: Եկեղեցւոյն մէջ երկսեռ խառն բազմութիւն մը լեց- ուած էր արդէն:

Հանդէսը սկսաւ աշակերտներուն երգերով, որոնցմէ ետքը սաներն ու սանուհիներն այլեւայլ արտասանու- թիւններ ըրին, երգերով ընդմիջ- ուած:

Հանդէսը առ հասարակ լաւ տպա-ւորութիւն թողուց. աշակերտները իրենց արտասանած կտորներուն մէջ մասամբ յաջող էին: Հասարակու- թիւնը ուրախ ու ոգևորուած մեկ- նեցաւ եկեղեցիին, զո՞ իր ազգին անցեալ փառքերուն վրայ անդրա- դառնալու եւ զանոնք յիշելու առիթը ունեցած ըլլալուն համար:

Հանդէսը շատ գեղեցիկ վերջբա- նով մը փակուեցաւ, ու է՛ն գողտ- րիկ տեսարանն էր այն պատկերը, երբ «Մեր Հայրենիք»ը արտասանող գրօջակիւր աշակերտուհին իր ձեռ- քով բանուած գրօջակը յանձնել ըն- կերով, զայն Մայր Հայրենիք կոռե- լու ուղարկելով:

Աշակերտները եկեղեցիէն դուրս, վարժարանին սանդղակներուն վրայ գրօջակին շուրջը հաւաքուած՝ կրկին երգեցին «Կուուեցէք տղերք»ը, որով հանդէսը փակուեցաւ:

(վերջինն էլ Լիւլաւ թաղի երկսեռ դպրոցներում գոյութիւն չունի 1838— 1899 ուսուցական տարւանից) պիտի վերացէին, փոխադրութիւնները կատարէին, տարեկան աշխատանքով, թէեւ այդ ծրագրի մի մասն ըն- դունեց, բայց էլ ի զգալի կերպով քննութիւնները թեթեւեցան:

Թո՞ղ ընթերցող հասարակութիւնը չկարծէ, թէ Լիւլաւ թաղի «Հայկազ- եան» ու «Թամարեան» երկսեռ դպ- րոցները մենք համարում ենք ամեն պակասութիւններից ազատ, մի կա- սարեչախոյ, ո՞չ, դա կատարեալ յան- դգնութիւն կը լինի. միայն մեր խո- րին համոզմունքով նրանք համեմա- տաբար աւելի լաւ, աւելի կանոնա-ւոր մանկավարժական հիմքերի վրա են գրւած, քան թէ թեմականների ու քննութիւնների կողմնակից դպ- րոցները:

Տիգրան Ռաշիմեան (Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վեհափառ կաթողիկոսը թոյլատրեր է ներսեան գարոցի նոր շինութիւնը կառուցանել վանքի եկեղեցու մօտ գտնուող գարոցապետական հողի վրայ:

Մօտ օրերս վեհափառը այն իմաստով յատուկ կոնդակ պիտի սոյն հոգարարձու թեան:

— Ներսեան գարոցի հոգարարձու թիւնը որոշեր է ինքզնիք Մանդինեանին տարեկան թոշակ յատկացնել 600 ռուպլի ցմահ:

— Անցեալ հինգշաբթի գիշեր ըստ յայտարարութեան, տեղի ունեցաւ քաղաքիս վարժարաններուն ի նպաստ ընտանեկան պարահանդէսը: Բաւական կոկիկ հասոյթ մը գոյացեր է, մօտ 1000 ֆր. զուտ:

Պարահանդէսի մրցանակները շահեր են Իսլամական երկու քոյրերը:

— Հաւաքարի մէջ մեռեր է Տիկ. Թագուհի Փանոսեան, և հետեւեալ կուսկը կարգադրեց 10,000 ռուպլի արժողութիւն ունեցող սուներ կտակեր է ներսեան գարոցին, և ասկից զատ կարգադրեր է որ մնացած գոյքերը ծախուին և գոյացած գումարէն 4000 ռուպլի յատկացուի ներսեան գարոցի թողած տանը նորոգութեան համար: 2000 ռուպլի Երեւանի թեմական գարոցին, 2000 ռուպլի Փ. Ջանեանցի անունով հիմնուած որբանոցներուն, 1000 ռուպլի Թիֆլիսի մէջ հիմնուելիք ժողովրդական տանը: 2000 ռուպլի Քամոյեան եկեղեցւոյն, 3000 ռուպլի Թիֆլիսի երեք համբարներուն (այդ գումարի սովորով ալքատ ալիկներուն օժիտ աւուր համար) և որոշ գումար մըն ալ իր ազգականներուն: Եթէ մնացորդ ըլլայ, այն ալ պիտի յատկացուի Ռուսաստանի և արտասահմանի գարոցներուն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Բ Ի Ս

Իսկիւպէն կը հեռագրեն թէ քաղաքին մէջ գտնուած քահանայ մը Մաննովիլ անուն, ծանրապէս վիրաւորուեր է օր ցերեկով փողոցին մէջ պուլկարի մը կողմէ, որ կը կարծուի թէ մականգոնական կօմիտէի անդամներէն մէկն է: Եւ որովհետեւ մինչեւ հիմա պուլկարներու կողմէ կատարուած սպանութեան շարքին մէջ բոլորովին նորութիւն մըն է ասիկայ, ուստի ամբողջ զաւաստը սաստիկ իրարանցումի մէջ է: 20—30 սպաննուածներ և 50 հատ ալ վիրա-

ւորուածներ կը հաշուուին նոյնանման պարագաներու մէջ:

Ս Պ Ա Ն Ի Ա

Մատրիտը խաղաղ է բայց գաւառներու մէջ մանաւանդ Սէվիլի և Վալանսի մէջ խիստ հսկողութեամբ կը վարուին:

Մատրիտի թերթերը բացարձակ լուծուին կը պահեն գաւառներու դէպքերու մասին որովհետեւ զինուորական գրաքննութիւնը ժէնէրալ Վէյլերի յայտարարութեան համաձայն արգիլած է յուզում յառաջ բերող ու է գրութեան հրատարակումը:

— Ժէնէրալ Վէյլերի հրամանով «Բրոկլիբեսո» հանրապետական լրագրին բոլոր խմբագիրները ձերբակալուեր են և խմբագրատունը կնիքի տակ գրուեր է: Այդ թերթը քիմիական ֆորմիլ մը հրատարակած էր որով փուչոցները կարելի պիտի ըլլար ձիերը սասկեցնել և հեծելազօրքերուն գործունէութիւնը պիտի արգիլէին:

Լ Ե Հ Ա Ս Ս Ա Ն

Գերմանական կառավարութիւնը կը շարունակէ կասաչօրէն հալածել Լեհական տարրը: Գերմանական պաշտօնեաները Բօզէն և ուրիշ լեհական քաղաքներուն մէջ խնուծութիւններէն զրատեր են մազմաթիւ գոռնուոր խաչելութեան պատկերներ: Խաչին ստորտը նկարուած է եղբոր շղթայակապ սղաւոր կին մը, խորհրդանշան Լեհաստանի որուն գրոշակները գետնի վրայ տարածուած կը մնան պատահաւորապէս: Այս գրոշակներուն վրայ նշանակուած են եղբր Լեհաստանի բաժանման և լեհական շորս ապստամբութեան զանազան թուականները: Իսկ խորը կերեւայ եղբր լեհական սպիտակ արծիւը Վարշաւի վրայ սուսուսած:

Այն պատկերը գերման պաշտօնեաներու աչքին վտանգաւոր բորբականտայի և խռովարարութեան առարկայ մը թուեր է:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Քուան Սու կայսրը որոշած է որ պօքսէր շարժումներու պետերը հետեւեալ պատիժները կրեն: Շուանկ գնտապարտուի անձնասպան ըլլալու, թուան և Լան իշխանները աքսորուելու, Իւհիէն գլխատուելու, թունկ Գուսիանկ, Եինեուիէն Չաօյուքիասօ աստիճանազուրկ ըլլալու իսկ մեռած Յիւթօնկի և Գանդուի ընտանիքները պիտի զըր-

կուին կայսերական շնորհքներէն:

— Նիւ-Եորքէն քաջուած հեռագիր մը կը յայտնէ թէ Չինական լիազօրները կայսեր լուր տուած են որ օտար գեւապաններու այդ մասին տուած որոշումը անգառնալի է, բայց միայն թունկֆուսիանկի վճիռը կրնայ առայժմ յետաձգուիլ:

— Բէքինէն կը հեռագրեն թէ գեւապաններու թաղը պաշտպանելու համար զինուորական իշխանութիւնները ծրագիր մը պատրաստած են որուն համեմատ միջպագային պարիսպ մը պիտի շինուի կայսերական պալատին երկայնութեամբ: Պալատէն դեպանատունները գտնուած բոլոր շէնքերը պիտի փլուցուին ու շրջակայ շիններու վերաբերող տունները պիտի գրաւուին: Փրանսական և գերմանական գեւապանները արդէն ընդարձակ հողեր իրացուցած են: Իտալական գեւապանատունը նոյնիսկ ծովային մաքսատան պարտէզին ու շէնքերուն մէկ մասը իր շէնքին կցած է:

Այս տեսակ պայմաններու մէջ, կըսէ «Յայմզ» կայսերական ընտանիքը բոլորովին չենք կրնար մեղադրել Շուանի մնալ ուղելուն համար:

— Փրանսական զօրախումբ մը որ Շանհայ Գուան մեկնած էր, շրջակայ քաղաք մը քարոքանդ ըրած է, որովհետեւ քաղաքապետը մերժած էր 7000 թաէլ սուղանք վճարել կաթողիկ տեղացիներու կրամ կորուստներուն փոխարէն:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Անցեալ ուրբաթ փետր. 2ին Սօֆիայի մէջ մականգոնացիներու հրացանածիք ընկերութիւնը մեծ միթիւնկ մը կազմեր է որուն ներկայ եղբր Կն 1000է աւելի անձեր և ուր որոշուեր է կառավարութեան խնդրել, որ այս ընկերութիւնը չի լուծէ և անոր կանոնագրութիւնը վաւերացնէ:

— Լուր կայ թէ Սօֆիայի ուսական գեւապանին ալգեցութեամբ. Սարաֆօֆ կը խորհի հրաժարիլ մականգոնական կօմիտէի նախագահութեան պաշտօնէն, որուն գործունէութիւնը աքգէն շատ մը արգելքներու սկսած է բազմիլ նախարարութեան մէջ Բէթրօֆի մտնելէն ի վեր:

Ք Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Փետր. 12ին 200 անգլիացի հեծելազօրքերու և պօէրներու ստաւար խումբի մը միջեւ ընդհարում մը տեղի ունեցեր է Գո-

լէզպուրկէն 20 փարսախ հեռու: Պօէրները փորձեր են շրջապատել անգլիացիները, որոնք հասած օգնութեան շնորհիւ միայն կարողացած են ազատուիլ:

Գերի բռնուած պօէր մը յայտարարեր է թէ 1500 հոգի էին յարձակողները 200 կառքերով: Կրաֆօնտէնի բոլոր արու բնակիչները ձերբակալուեր են պօէրներուն օգնած ըլլալու ամբաստանութեամբ:

50 պօէրներու ջոկատ մը անգլիական զօրքերուն համար տարուող 70 ձիեր յափշտակեր է:

— Ժանտախտը մտատանջութիւն պատճառած է Քարի տեղացիներուն, որոնցմէ մաս մը դէպի հիւսիս ճամբորդող նաւ մը մտնելով մերձեր են գուրս ելլել: Յետոյ 500ի չափ գործաւորներ տեղական կառավարչատունը դիմելով 6 պատգամաւորներ պրկեր են կառավարչին ի դիմաց 5000 գործաւորներու, որոնք յայտարարեր են թէ՛ որքան որ ժանտախտը տիրէ քաղաքին մէջ իրենք կը մերժեն աշխատել և որոշած են իրենց բնակավայրը վերագառնել:

— Բէլ-Մէլ-Կազէթ լրագիրը հետաքրքրական տեսակցութիւն մը կը հրատարակէ Քրիւկէրի հետ Լահէի մէջ: Քրիւկէր ցաւ յայտնելով որ, ոչ ոք փափաք յայտնած է իրաւարարութեան դեր ստանձնել թրանսվալի և Անգլիոյ միջեւ, այն հաստատ յոյսը յայտնեւ է թէ պօէրները վերջապէս զատը պիտի շահին՝ թէ ինչպէս կամ երբ, ինքն ալ չը գիտեր: Քրիւկէր յայտարարեր է թէ՛ Եւրոպայի մէջ գտած ընդունելութիւնը իրեն համար պատրանք մը եղած է: «Ես Շիթայի պէս պօէր զօրքերու գլուխը չեմ կրնար անցնել որովհետեւ շատ ծեր եմ, բայց հոս կրնամ օգտակար ըլլալ: Գալով կնոջս շատ կը ցաւիմ իր վրայ, բայց աւելի կը ցաւիմ հայրենիքիս վրայ: Կինս տղաքներ ալ ունի, որոնց երկուքը պատերազմի դաշտին վրայ մեռան, երկուքն ալ գերի բռնուեցաւ և երկուքն ալ կարծեմ մեռած ըլլալու են, որովհետեւ երկու ամիսէ ի վեր տեղեկութիւն չեմ ստացած անոնց մասին»:

Չ ՈՒԱՐԱՆ ԿՈՒԹԷՆՊԷՐԿ

(Տպագրական տառերու) Կարճր մետաղ . Ողիդ կարգ Հաշտար բարձրորդիս Ամէն լիզուէ տպագրական տառեր և զանազանք՝ զոհացուցիչ գնեցով Հասցէ՝ Fonderie typographique, Gutenberg Sophia, Rue Graff Jgnatieff № 3 Օтговорникъ: Д.рѣ МХГЖРДИЧЪ ВАРТАНІ Печ. «Взаимность» — Варна.